«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման հանձնաժողովի նիստի 2026թ. մայիսի 06-ի նիստի թիվ 9/26 արձանագրությունից

. . .

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և անցկացված քննարկումների հիման վրա և առաջնորդվելով Պալատի խորհրդի 2021 թ. դեկտեմբերի 2-ին ընդունված թիվ 70-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգով՝ Հանձնաժողովը քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 9, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

. . .

3.2. Հավանություն տալ Նեքսիա Արմենիա ՓԲԸ-ի կազմակերպած ստորև նշված դասընթացները և Nexia International-ի եվրոպական տարածաշրջանային համաժողովը ՇՄՋ համարելուն՝ որպես ՇՄՋ կարգի համապատասխանաբար 3.1.2. և 3.1.5 կետերով նախատեսված միջոցառումներ.

Դասընթացի (սեմինարի) թեմա	**Տևողություն**	**Դասընթացավար**	**Ամսաթիվ**	**Անցկացման վայր**
Հաշվապահական հաշվառման բարեփոխումները և կարգավորող օրենսդրությունը հանրային հատվածում	2 ժամ	Կարեն Ալավերդյան	28.04.2026թ.	Կոմիտաս 15/7, 2-րդ հարկ
Ոչ առևտրային կազմակերպությունների հաշվառման և հարկման առանձնահատկություններն ու փոփոխությունները	4 ժամ	Արմեն Պետրոսյան	2026թ. մայիս-հունիս	Կոմիտաս 15/7, 2-րդ հարկ
Nexia Europe Regional Conference 2026	10 ժամ	Nexia International	15.04.2026թ.-17.04.2026թ.	Իսպանիա, Բարսելոնա

3.3. Սահմանել, որ որպես ՇՄՋ համարելուն հավանություն տալու վերաբերյալ կայացված վերը բերված թիվ 3.1., 3.2. որոշումները վավեր են՝ պայմանով, որ դասընթացները փաստացի անցկացվեն այն անձանց կողմից, ում CV-ն որպես տվյալ միջոցառման դասընթացավարի, ներկայացվել է հանձնաժողովին՝ հավանություն ստանալու նպատակով, ինչպես նաև դասընթացների անցկացման կոնկրետ ժամանակացույցի և վայրի ու դրանց հետագա փոփոխությունների (եթե այդպիսիք լինեն) մասին նախապես հայտնեն Հանձնաժողովին:

Հանձնաժողովի նախագահ՝ *Ա. Հարությունյան*

Քարտուղար՝ *Գ. Ատուրյան*